«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ	Երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման դերն ու նշանակությունը
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Հայկուշ Ներսիկի Ներսեսյան
ՄԱՐԶ	Շիրակի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....3

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ……...…..4

1.1Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը դպրոցում……..……5

1.2Սովորողների ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես արդյունավետ ուսուցման պայման……..8

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ……10

2.1Խաղային տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման գործում ……10

2.2Ստեղծագործական ունակությունների զարգացումը……14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է երեխաների մեջ ստեղծագործական ունակությունների և կարողությունների ձևավորման և զարգացման ուղիների բացահայտումը խաղի միջոցով: Երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը ապահովում է անհատի կողմից ազգային և համամարդկային մշակույթի ընկալումն ու յուրացումը, ինչը հանդիսանում է անհատի ձևավորման, հոգևոր, մտավոր, ստեղծագործական անհատականության զարգացման համար կարևորագույն միջոցներից մեկը: Ստեղծագործական ունակությունների զարգացումը խաղերի միջոցով երեխային հնարավորություն են տալիս ինքնաարտահայտման ճիշտ ուղի գտնել: Երեխայի բազմակողմանի զարգացումը կարող է օգնել նրա ստեղծագործական պոտենցիալի բացահայտմանը:

Մանկավարժության մեջ միշտ էլ կարևորվել է սովորողների ստեղծագործական ներուժի զարգացումն ու ստեղծագործ անհատների դաստիարակումը:

Արդի մանկավարժական պրակտիկայում առավել կարևորվում է սերնդի ստեղծագործական ներուժի զարգացումը: Այն բխում է ժամանակակից հասարակության պահանջներից և իրականացվում է կրթական համակարգի բոլոր աստիճաններում՝ նրա բոլոր մասնակիցների համար: Սա նշանակում է, որ բոլոր կրթական պլաններում ու ծրագրերում պետք է նախատեսվեն գործունեության այնպիսի ձևեր, որոնք ոչ միայն կխթանեն սովորողների տրամաբանական, քննադատական, այլև ստեղծագործական մտածողությունը: Ուսուցիչների համար այն դրսևորվում է մասնագիտական գործունեության առավել արդյունավետ ոճի ընտրությամբ, մի շարք նորարարական տեխնոլոգիաների, ծրագրերի մշակմամբ, կիրառմամբ և այլն:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը:
- Բացահայտել երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը խաղերի միջոցով:

ԳԼՈՒԽ 1.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մտածողությունը հատուկ է միայն մարդուն: Նրան է միայն տրված ստեղծագործաբար մտածելու ունակություն:

Ցանկացած մարդ ունի ինքնաարտահայտվելու պահանջմունք, որը բավարարվում է հենց ստեղծագործականության միջոցով: Ստեղծագործական մտածողությունը աշխարհի բացահայտման ակտիվ միջոցներից է: Այն ապահովում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ ողջ մարդկության առաջընթացն ու զարգացումը:

Մարդու ստեղծագործական մտածողությունը հետաքրքրել է դեռևս անտիկ փիլիսոփաներին /Սոկրատես, Պլատոն, Արիստոտել/:

Այս երևույթի ուսումնասիրմամբ զբաղվել են մի շարք փիլիսոփաներ, ինչպիսիք են՝ Ն. Ա. Բերդյանը, Մ. Մ. Բախտինը, Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Լ. Ռուբինշտեյնը, Ա. Ն. Լեոնտևը, Ու. Ի. Ուզնաձեն, Զ. Ֆրեյդը, Ա. Ադլերը, Կ. Յունգը, Կ. Ս. Հոլլը, Ռ. Ֆ. Թոմսոնը և այլք, ինչպես նաև ժամանակակից մի խումբ հոգեբաններ և մանկավարժներ:

Ստեղծագործությունը մարդկային գործունեության մի ձև է, որի ընթացքում ստեղծվում են որակապես նոր նյութական կամ հոգևոր արժեքներ: Նորույթն ու նորարարությունը ստեղծագործականության բնորոշ գծեր են: Ստեղծագործությունը կարելի է դիտարկել նաև որպես մի գործընթաց, որի ժամանակ փոխներգործության մեջ են մտնում անձի ներաշխարհն ու նրա ծավալած գործունեությունը:

Ե. Ս. Ռապացևիչը «ժամանակակից մեծ հանրագիտարան»-ում «ստեղծագործականություն» հասկացությունը մեկնաբանում է որպես գործունեություն, որի արդյունքում ստեղծվում են նոր,

ինչն այդ չստեղծված նյութական և հոգևոր արժեքներ, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ նշանակություն[12]:

Ստեղծագործական մտածողությունը մարդու հոգեբանական այնպիսի առանձնահատկություններ են, որոնցից կախված է գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, բայց որոնք այդ գիտելիքներին, հմտություններին և կարողություններին չեն հանգեցվում: Հմտությունների, կարողությունների և գիտելիքների նկատմամբ մարդու ստեղծագործական մտածողությունը հանդես են գալիս իբրև որոշ հնարավորություն: Հայտնի են շատ դեպքեր, երբ մանուկ հասակում շրջապատի կողմից չեն գնահատվում մարդու այն ստեղծագործական մտածողությունը, որոնց հետագա զարգացումը նրան արժանի փառք է բերում:

Սակայն հատկապես օժտված երեխաների մոտ այդ հակումն սկսվում է ավելի շուտ և էապես ավելի արտահայտված ձևերով: Ըստ Վ. Ս. Յուրկևիչի՝ պատճառներից մեկը կարող է լինել օժտված երեխաների մոտ այսպես կոչված «միամիտ» կրեատիվության բավականին շուտ անհետացումը, երբ «մշակութային կրեատիվություն» զարգացման համար դեռևս չունեն համապատասխան ինտելեկտուալ, զգայական անձնային և սոցիալական նախադրյալներ[11]:

Օժտված երեխաներին բնորոշ է զարգացման հատուկ իրավիճակ, ինչը բնութագրվում է հետևյալ գործոններով.

- Մեծագույն հարմարատևությամբ: Իրականում, վաղ հասակից և մինչև դպրոցն ավարտելը օժտվածների մոտ նշվում է դժվարությունների լրիվ բացակայություն իմացության և ուսուցման գործընթացում: Ավելին՝ ծնողները, հիանալով օժտված երեխայով, թույլ են տալիս նրանց շրջանցել սոցիալական և կենցաղային դժվարությունները (ծնողների հիպերխնամակալություն):
- Քայքայիչ անհարմարավետությամբ: Դրանք են հասակակիցների և ամբողջ կոլեկտիվի հետ փոխազդեցության դժվարությունները, սեփական զգայական առանձնահատկությունների հետ հարմարվելու հիմնախնդիրը, ուսուցման ավելորդ հեշտությունը՝ ձանձրույթը և այլն: Ենթադրվում է, որ, վերջին հաշվով, ծագում է դժվարությունները հաղթահարելու հատուկ պահանջ, երբ հեշտը ձանձրալի է թվում և չի հմայում սուբյեկտին: Ուսուցչի խնդիրը պետք է լինի սովորել օժտված դպրոցականին գլուխ հանել անսովոր իրավիճակներից:

- «Ուսումնական» օժտվածությունը ենթադրում է սեփական մոտեցման բացակայություն և կապված է սովորողի ինտելեկտուալ զարգացման, այսինքն՝ հիշողության ու տրամաբանական մտածողության վարժանքի հետ:

Տեսակետն այն մասին, որ ստեղծագործական ընդունակությունները չեն համընկնում ինտելեկտուալի հետ, տարածում է ստացել հոգեբանների ու մանկավարժների մոտ դեռևս անցած դարում: Այսպես, Յա. Ա. Պոնոմարյովը[5] գրում է գիտնականները բաժանվում են երկու խմբի.

- ցածր արդյունավետությամբ ինտելեկտուալներ՝ «քայլող գրադարան», ովքեր ունեն շատ լավ հիշողություն,
- ստեղծագործ արդյունավետությամբ գիտնականներ, ովքեր հագեցած չեն ավելցուկային գիտելիքներով, բայց օժտված են հզոր զարգացած երևակայությամբ և փայլուն ռեակցիայով՝ ցանկացած տեսակի գաղափարին:

Որպես ստեղծագործական գործունեության փորձի բաղադրիչ՝ կարելի է առանձնացնել դպրոցում ուսուցանվող առարկաների տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների օգտագործման փորձը հիմնախնդրի լուծման համար: Առանց ճկուն ու իմաստավորված գիտելիքների հնարավոր չէ ստեղծագործել: Միևնույն ժամանակ՝ ստեղծագործությունը կարելի է դիտել որպես աշակերտների գիտելիքների ճկունության ու իմաստավորվածության բարձրացման միջոց: Կարծես թե ստացվում է տրամաբանական փակ (արատավոր) շրջան: Այդ շրջանից դուրս գալու համար անհրաժեշտ է աշակերտներին մասնակից դարձնել ստեղծագործելու գործընթացին, այսինքն՝ իրենց գիտելիքների մակարդակին համապատասխան խնդիրներ լուծել: Ստեղծագործական խնդիրները կարելի է դիտարկել նաև որպես աշակերտների՝ իմաստավորելու և վերաիմաստավորելու ընդունակության բարձրացման միջոց: Գիտական հոգեբանության մեջ աշակերտի սովորելու ընդունակությունը բնութագրվում է որպես ինտելեկտ կամ ընդհանուր ինտելեկտ, իսկ ստեղծագործելու ընդունակությունը բնորոշվում է որպես կրեատիվություն: Այլ կերպ ասած՝ առաջին դեպքում «գիտելիքներ են կլանում», իսկ երկրորդ դեպքում՝ ստեղծվում[1]:

Կրեատիվ մանկավարժության գաղափարը ավելի լիարժեք է համապատասխանում վարժարանային կրթության էությանը, կրթությունը, որպես «մարդու կրթություն», պետք է դառնա մղում դեպի ստեղծագործումը, քանի որ ստեղծագործության մեջ է կայանում մարդկայինի բուն

էությունը մարդու մեջ: Մանկավարժները և հոգեբանները ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ դպրոցական տարիները անձի կայացման տարիներ են, ապա ուսուցչի գլխավոր խնդիրը սովորողների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեության մեջ: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս կառուցել սովորողների ուսումնական գործունեությունը, որպեսզի առավելագույնս բացահայտվեն նրանց ստեղծագործական ընդունակությունները:

Սովորողների ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտածելու ընդհանուր կուլտուրայի առկայությունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը. կարողանալ վերլուծել, սինթեզել, գտնել պատճառահետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այլն: Բացի դրանից, ուսումնական ստեղծագործական գործունեությունում օգտագործվում են այնպիսի ինտելեկտուալ ընդունակություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը:

1.2 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անհատից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները ստեղծագործաբար լուծելու հմտություն: Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական և ստեղծագործական գործունեությունը: Ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է ծավալվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբի համագործակցությամբ: Արդի ուսուցման հիմնական նպատակն է՝ ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և ստեղծագործաբար կիրառելու կարողություններ:

Ստեղծագործական կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի ստեղծագործական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտեր դպրոցական տարիքում՝ գրական ստեղծագործական գործունեության մեջ: Կրտսեր դպրոցականների ստեղծագործելու գործընթացի հիմնական դժվարությունը պայմանավորված է գրավոր և բանավոր խոսքի ոչ ճիշտ կառուցմամբ և բառապաշարի աղքատությամբ: Այս հարցերում ուսուցիչը պետք է խելամտորեն միջամտի: Պահանջվում է միասնական համակարգ, որն իր մեջ ներառի մի շարք մեթոդներ և հնարներ: Համակարգ ասելով հասկանում ենք ստեղծագործական առաջադրանքների հաջորդական կիրառումը՝ պարզից բարդ սկզբունքով:

Ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով հարկավոր է.

Առաջին. սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոնք անմիջաբար առնչվում են ստեղծագործական գործունեությանը և որոշում դրա արդյունավետությունը: Դրանք են՝ դիտողականություն, շփվողականություն, խոսքային և ընդհանուր ակտիվություն, հնարամտություն, ծուլությունը և դժվարությունները հաղթահարելու կամք, լավ մարզված հիշողություն, իրողությունները իմաստավորելու և համակողմանի վերլուծելու սովորույթ և մշակույթ: Միևնույն ժամանակ ստեղծագործական հակումներ արթնանում են զգայական հարուստ ներաշխարհով, հրապուրվելու ունակությամբ, երևակայության և ճանաչողական հետաքրքրություններ զարգացածության բարձր մակարդակ ունեցող անձանց մեջ: Այս որակներն ու կարողությունները կարելի է ձևավորել և զարգացնել լեզվական խաղերի, տարբեր մրցույթների, վիկտորինաների, ցերեկույթների կազմակերպմամբ և այլ միջոցներով:

Երկրորդ. պայմաններ ստեղծել անհատականության դրսևորման ու անձի ինքնաարտահայտման համար: Երբ երեխան որևէ ներկայացման մեջ ստանձնում է տվյալ հերոսի դերը, նա յուրովի է արտահայտում ընտրված կերպարի զգացմունքները: Երևակայությամբ որոշակի դրվագներ պատկերելով՝ նա իրացնում է իր անձնական ընկալումը և վերաբերմունք դրսևորում տվյալ հերոսի կամ իրադարձության հանդեպ: Այդ գործողությունների պարբերական ու հետևողական կրկնությունները կուտակում են հուզական ու իմացական փորձ և ձևավորում համապատասխան մշակույթ: Դրանք ի հայտ են գալիս նաև տարբեր տիպի ստեղծագործական

շարադրություններ գրելու, գրքի ընթերցանության, ներկայացման կամ ֆիլմի մասին կարծիքներ արտահայտելու, ընթերցածի վերաբերյալ նկարաշարի ստեղծման ընթացքում:

Երրորդ. երեխաներին դրդել ճանաչողական գործընթացում կիրառել հետազոտական գործունեության տարրեր, ինչպես նաև համատեղ ջանքերի գործադրմամբ հասնել առաջադրված խնդիրների իրականացմանը:

Ըստ ստեղծագործական գործունեության տեսակի կարելի է առանձնացնել 4 խումբ մեթոդներ և հնարներ, որոնք նպատակաուղղված են մայրենիի դասերին կրտսեր դպրոցականների ստեղծագործական ակտիվության խթանմանը և համապատասխան ունակությունների զարգացմանը.

1. Ստեղծագործության պատկերների բանավոր վերարտադրում,
2. Թատերական գործունեություն,
3. Նկարչական գործունեություն,
4. Երաժշտական ստեղծագործական գործունեություն:

ԳԼՈՒԽ 2.

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1 ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մանկավարժության մեջ միշտ էլ կարևորվել է սովորողների ստեղծագործական ներուժի զարգացումն ու ստեղծագործ անհատների դաստիարակումը: Արդի մանկավարժական պրակտիկայում առավել կարևորվում է սերնդի ստեղծագործական ներուժի զարգացումը: Այն բխում է ժամանակակից հասարակության պահանջներից և իրականացվում է կրթական համակարգի բոլոր աստիճաններում՝ նրա բոլոր մասնակիցների համար:

Բոլոր ուսուցիչներն էլ ցանկանում են ունենալ կռահունակ, հետաքրքրասեր, սրամիտ, դատող աշակերտներ: Մարդիկ ծնվում են մտածական տարբեր ունակություններով: Ուսուցչի դերն այս հարցում ճիշտ ճանապարհ ցույց տալն է, և «ձեռք բռնած» ուղեկցելը… Ուսուցիչը պետք է սովորեցնի մտածել: Եվ պատահական չէ, որ ուսուցչի կողմից ճիշտ ճանապարհով առաջնորդվող աշակերտները կարող են գերազանցել նրան: Այս դեպքում նախանձելի իրավիճակում են հայտվնում թե՛ աշակերտը և թե՛ ուսուցիչը: Հետաքրքիր և խնդրահարույց իրավիճակներ ստեղծելու դեպքում դասարանում անտարբեր աշակերտներ չեն մնում: Իհարկե, ոմանք կարող են տալ անընդունելի պատասխաններ, որոնք պարզաբանվում ու վերլուծվում են ընկերների և ուսուցչի կողմից:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործականությունը մեծապես պայմանավորված է նրանց խաղային գործունեության ձևերով: Խաղը տալիս է նորարարություն և ստեղծագործականություն դրսևորելու հնարավորություն: Հենց ստեղծագործական խաղերի միջոցով կրտսեր դպրոցականը կարող է բացահայտել իր ողջ ներուժը և, իհարկե՛ ինքն իրեն: Խաղի ժամանակ ձևավորվում են սովորողների համագործակցային ունակությունները, որոնք մեծապես նպաստում են կոլեկտիվ և զույգերով ստեղծագործելու, նախագծային գործունեություն ծավալելու կարողության ձևավորմանը և համապատասխան դրդապատճառների ծագմանը:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունն առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղը երեխայի համար կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում: Ըստ հոգեբանների՝ այդ տարիքն է առանձնանում որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան, և զարգացման հենց այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը, ուսուցման հետ զուգահեռ, շարունակում է մնալ խաղը: Այդ տարիքում խաղն անձի ձևավորման կարևորագույն միջոց և գործոն է: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտների ակտիվացմանը՝ և՛ մարմնաշարժողական, և՛ իմացական առումներով: Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Խաղի մուտքը կենդանի մանկավարժական գործընթացներ դասարանում ստեղծում է նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա խաղի շնորհիվ դրանք աստիճանաբար անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը՝ աննկատելիորեն ընդգրկվելով ակտիվ ուսուցման մեջ: Խաղը հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջո[6]:

Խաղը երեխայի համար առաջնային գործունեություն է: Այն զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է: Երեխան լրջորեն է վերաբերվում խաղին և նույնպիսի մոտեցում էլ պահանջում է շրջապատից: Մեծահասակն իր զգացմունքները, զայրույթն ու անհանգստությունն արտահայտում է խոսքային մակարդակում, իսկ երեխան՝ խաղային գործունեությամբ: Խաղը փոքրիկի համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է: Հատկապես կարևոր են այն խաղերը, որոնք հորինում է հենց ինքը՝ երեխան: Խաղի ժամանակ մասնակիցները պետք է ցուցաբերեն կամքի ուժ, համարձակություն, իրավիճակին

ստեղծագործաբար մոտենալու կարողություն, այսինքն՝ բոլոր անհրաժեշտ որակները, որոնք ձևավորում են լավատեսություն: Խաղի ընթացքում հնարավոր են նաև հիասթափություն, երբեմն վիրավորանքի, վախի և այլ զգացումների դրսևորումներ: Կարևոր է նաև հասակակիցների հետ շփումը: Նրանք սովորում են իրարից և ընդօրինակում միմյանց (ցանկալի և անցանկալի վարք):

Խաղը որպես գործունեության ձև իրականացնում է մի շարք գործառույթներ.

- զարգացնող
- դաստիարակող
- շփման և հաղորդակցման
- կարգավորող
- առողջարարական /թերապևտիկ/[3]:

Թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում: Դրա շնորհիվ նրանք դառնում են դիտունակ, սովորում են համեմատել, դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների: Իսկ դա նպաստում է նրանց զարգացմանը, զուգահեռաբար զարգացնում ընկալունակությունը, խոսքը և ուշադրությունը:

Դիդակտիկ խաղերը, ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներն են: Դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերում են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները: Բացի դրանից, խաղային իրավիճակը նպաստում է, որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր դերը և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը[1]:

«Խաղային տեխնոլոգիա» ասելով պետք է հասկանալ խաղի իրականացման ընթացքը: Խաղային տեխնոլոգիայի կառուցվածքի մեջ են մտնում նպատակադրումը, պլանավորումը, նպատակների իրականացումը, արդյունքների վերլուծությունը: Խաղի ընթացքում անձն իրեն իրացնում է լիարժեքորեն: Խաղային տեխնոլոգիան ներառում է.

- դերեր, որոնք պետք է կատարեն խաղացողները,

- խաղային գործողություններ, որպես դերերի կատարման միջոցներ,
- առարկաների խաղային, պայմանական օգտագործումը,
- խաղացողների միջև իրական հարաբերությունների ստեղծումը,
- սյուժե, բովանդակություն՝ այն իրականությունը, որը պայմանականորեն վերարտադրվում է խաղի մեջ[2]:

Խաղային տեխնոլոգիաների նշանակությունը դժվար է թերագնահատել: Այն համարվում է զվարճանքի, հանգստի, ուսուցման, ստեղծագործության, թերապիայի հզոր միջոց: Ժամանակակից կրտսեր դպրոցում խաղը կիրառվում է որպես ինքնուրույն տեխնոլոգիա՝ թեման, բաժինը ուսումնասիրելու և յուրացնելու նպատակով, որպես դասի առանձին տարր, արտաուսումնական պարապմունքի ձև և այլն: Պարապմունքների խաղային ձևն ստեղծվում է խաղային եղանակների և իրավիճակների օգնությամբ: Այն ուսումնական գործունեությունը խթանող միջոց է:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողությունը խթանելու համար անհրաժեշտ է՝

- ուսումնական խնդիրը ներկայացնել մտածողությունը խթանող տարբեր եղանակներով և միջոցներով,
- ուսումնական խնդիրը քննարկել տարբեր տեսանկյուններով և ակտիվ մեթոդներով,
- սովորողներին մղել հնարավորինս շատ և տարաբնույթ ստեղծագործական մտահղացումների, չկանխել նրանց անսովոր գաղափարները, չվախենալ սխալներից,
- մեծ տեղ տալ նորարարություններին, սովորեցնել ներկայացնել այնպիսի հարցադրումներ, որոնք դասարանին կտան մտածելու և նոր գաղափարներ ստեղծելու հնարավորություն,
- սովորեցնել լինել ինքնատիպ ցանկացած իրավիճակում՝ դրսևորելով մտքի ճկունություն,
- արտաքին դրական դրդապատճառների ակտիվացման միջոցով սովորողների մեջ ձևավորել բարձր և համարժեք ինքնագնահատական,
- խթանել սովորելու հանդեպ աշակերտների հետաքրքրությունը՝ խարսխվելով նրանց գործնական հետաքրքրությունների վրա, մշակել սովորականի մեջ անսովորը տեսնելու, զանազան իրերի տարբեր կիրառություններ առաջարկելու ունակություններ,

- մշակել անբացատրելի երևույթների բացատրությունը փնտրելու, ինքնատիպ մեկնաբանություններ ձևակերպելու կարողություններ։

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության ձևավորման և զարգացման համար նախ և առաջ ուսուցիչն ինքը պիտի օժտված լինի ստեղծագործական մտածողությամբ, ունենա վառ երևակայություն և ստեղծագործական մոտեցումներ։ Սա նշանակում է, որ ուսուցչի մանկավարժական աշխատանքը պետք է զերծ լինի մեխանիկական կրկնություններից և միօրինակությունից։ Հատկապես տարրական դպրոցի ուսուցիչը պետք է ունենա տարբեր իրավիճակներից արդյունավետ ելքեր գտնելու, իր մասնագիտական գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողություններ, տիրապետի հաղորդակցական կարողությունների և օգտագործի դրանք՝ ի շահ կրթական գործընթացի արդյունավետության, որոնի, մշակի սովորողներին ուսումնասիրելու, նրանց հնարավորությունները բացահայտելու նոր եղանակներ, դասավանդման նոր մեթոդներ ու միջոցներ։ Ստեղծագործական մտածողությամբ օժտված ուսուցիչը՝

- ճանաչում է և հաշվի է առնում սովորողների ստեղծագործական հնարավորությունները,
- հարգում է սովորողի ինքնուրույն աշխատելու ցանկությունը և նպաստում նրա ինքնադրսևորմանը,
- չի միջամտում սովորողների ակտիվ ստեղծագործական գործընթացին,
- սովորողներին տալիս է ազատ գործունեության ոլորտի ընտրության հնարավորություն,
- իրականացնում է ուսումնագիտական ծրագրեր՝ հիմք ընդունելով սովորողների անհատական առանձնահատկությունները և հետաքրքրությունները,
- անհրաժեշտ պայմաններ է ստեղծում սովորողների ստեղծագործական ունակությունների դրսևորման և զարգացման համար,
- բոլոր սովորողների համար ստեղծում է հավասար մրցակցային պայմաններ,
- խրախուսում է և գնահատում սովորողների ամենաչնչին ձեռքբերումները,
- ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ներգրավում է ընդհանուր ստեղծագործական աշխատանքի մեջ,
- բացահայտում է երևակայության և իրականության մեջ առկա հատման կետեր, օգտագործում է դրանք ուսուցման գործընթացում[2]։

2.2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Խաղային գործունեությունը, ինչպես գործունեության յուրաքանչյուր տեսակ, ունի իր կառուցվածքը, որը ներառում է նպատակ, դրդապատճառ, իրականացման միջոցներ, գործողության պլանավորում և գործողության արդյունք: Խաղի կառուցվածքում որպես կարևոր միավոր դիտվում է խաղային դերը, որը մեծահասակի գործողությունների վերարտադրումն է: Խաղի մեջ գործում են երկու տիպի փոխհարաբերություններ՝ խաղային և իրական.

- Դերային կամ խաղային հարաբերությունները պարտադրվում են ըստ դերի:
- Իրական հարաբերությունները երեխաների առօրյա կյանքում միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների արտացոլումն է[2]:

Այս երկու փոխհարաբերությունները կապված են միմյանց հետ, և դրանով է պայմանավորված խաղային գործունեության արդյունավետությունը:

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝

1. Ստեղծագործական, որոնք ընդգրկում են սյուժետադերային խաղեր և խաղ-բեմականացումներ:
2. Կանոնավոր խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճանքները:

Սյուժետադերային խաղերն առաջին հերթին արտացոլում են շրջակա միջավայրը, մարդկանց վարքը և գործունեության տարբեր ոլորտները: Այս խաղերն ազատ և ինքնաբուխ են: Դրանք նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական զբաղմունքն են: Խաղի ընթացքում մասնակիցների շփման, հաղորդակցման, համատեղ ակտիվության դրսևորման պրոցեսում համագործակցության մեջ են մտնում երեխայի իրական և դերային հարաբերությունները: Դրանք փոխադարձաբար նպաստում են խաղի արդյունավետությանը և երեխայի ներուժի բացահայտմանը:

Գրականության մեջ դրանք անվանում են նաև խաղ-բեմականացումներ: Այստեղ պետք է հարազատ մնալ տեքստին, իսկ խաղի բովանդակությունը վերցվում է հիմնականում գեղարվեստական ստեղծագործություններից:

Կանոնավոր խաղերն ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք: Դրանց թվին են պատկանում դիդակտիկ խաղերը, որոնք ունեն ուսուցողական բնույթ:

Թերևս բոլոր խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Խաղային խնդիրների լուծմամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտքի և մարմնի ճկունությունը, հնարամտությունը, սրամտությունը, համբերատարությունը, հանդուրժողականությունը և այլն:

Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները[2]:

Կ. Դ. Ուշինսկին ասում էր, որ դպրոց ընդունված երեխան պետք է կարողանա ճիշտ ընկալել շրջապատում կատարվող իրադարձությունները, ճիշտ մտածել ու արտահայտվել, կարդալ գիտակցորեն և խորհրդածել կարդացածի մասին: Ուստի անհրաժեշտ է կիրառել մեթոդներ, որոնք կնպաստեն դիտողականություն, մտքերը խոսքով արտահայտելու և այլ կարողությունների ձևավորմանը[2]:

Կարևոր է, որ երեխաները մասնակցեն դերախաղի մեջ գործածվող դեկորների պատաստմանը: Դերային խաղն ապահովում է արդյունավետ հաղորդակցություն, զարգացնում է ընդհանրության զգացումը, ուշադրությունը, սովորեցնում է ճիշտ արտահայտել մտքերը, կառուցել երկխոսություններ, զարգացնում է խոսքը: Երեխան սովորում է արտահայտել զգացումները, ձգտումները, սովորում է ենթարկել իր գործողությունները խաղի կանոններին, սովորում է նպատակաուղղված լինել:

Գրական նյութը հաճելի, զվարճալի և ուսանելի պետք է լինի. դա հետո պիտի վերածվի խաղի: Սահմանափակումներ չպետք է լինեն, որպեսզի երեխան չձանձրանա: Դերախաղով երեխան վերարտադրում է իր երազած աշխարհը, նմանվում է հերոսին: Երեխայի կողմից օգտագործվում են արտահայտչական միջոցներ՝ կեցվածք, արտահայտիչ խոսք, դիմախաղ, շարժում, բեմական հագուստ: Անգնահատելի է դերը խոսքի զարգացման գործում, հարստացնում է բառապաշարը, ձևավորվում է արտահայտչական և քերականական կողմերը: Զարգանում է համերաշխ կոլեկտիվը[4]:

Խաղ-բեմականացումները ծառայում են հենց այդ նպատակին: Անգամ այդ մեթոդիկայի առանձին հատվածների կիրառումն ուսուցման գործընթացում հարստացնում է ուսուցչի կողմից

իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը: Ինչպիսի՞ յուրահատկությամբ են առանձնանում խաղ- բեմականացումները: Նախ և առաջ երեխաները սիրում են խաղալ, իսկ սյուժետադերային խաղերը նրանց միջավայրում ձևավորվում են հեշտությամբ և անմիջականորեն: Դրան նպաստում է մանկական մտածողության կոնկրետ բնույթը, նրանց հուզականությունը, անխառն հավատը «ճշմարիտի» հանդեպ: Ուսուցչի կողմից ողջ ուսումնառության ընթացքում պետք է հոգատարությամբ պահպանվի այն մթնոլորտը, ուր խաղի մեջ ինքնաբերաբար դրսևորվում են երեխաների ստեղծագործելու կարողությունը, երևակայելը, վերամարմնավորումները և անկեղծ ուրախությունը: Դա նաև մեծ հնարավորություն է՝ ներազդելու յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունների, ճաշակի վրա, ձևավորել առողջ աշակերտական կոլեկտիվ: Ուսուցչի կողմից սյուժետադերային խաղի հմտորեն ղեկավարումը մանկավարժական հնար է, որն ընդունված է կոչել դրամատիզացիա: Այն իր բնույթով մոտ է բեմական գործողությանը[1]: Անգամ երեխաների մեջ լայն տարածում գտած սյուժետադերային խաղերը ևս կարելի է դիտարկել որպես թատերական գործողություն, որն իր բովանդակությամբ և ձևով մատչելի է երեխային: Այստեղ նկատելի են այնպիսի տարրեր, որոնք առկա են բեմի վրա:

Այսպիսով, սյուժետադերային խաղերը գործում են թատերական մանկավարժության օրենքներով: Դրամատիզացիաները, որոնք կիրառվում են կրտսեր դպրոցում դասերի ժամանակ, օգնում են երեխային յուրացնել ուսումնական նյութը: Միաժամանակ դասերի բովանդակությանը հաղորդում են աշխուժության և դրական հույզեր, որոնք երեխային թույլ են տալիս հանգստանալ, թուլացնել դասի ընթացքում առաջացած լարվածությունը: Վեցամյա երեխան շուտ է հոգնում: նա հանգստանում է շարժման մեջ, երբ ուրախանում և ժպտում է: Դրամատիզացիան տալիս է երեխային այդ ամենը. նա և՛ շարժվում է, և՛ ուրախանում, և՛ գիտելիքներ յուրացնում:

Թատերական ստեղծագործական գործունեություն /Խաղ-ներկայացում/

Սովորողների ստեղծագործական ներուժի դրսևորմանը նպաստելու, բառի գեղագիտական ընկալման հանդեպ հետաքրքրություն զարգացնելու նպատակով կիրառվում է հետևյալ խաղը. յուրաքանչյուր աշակերտ պետք է վերարտադրի այս կամ այն կերպարը՝ դրսևորելով ստեղծագործական ձիրք, և յուրատիպ ձևով ներկայացնի հեղինակի ասելիքը: Ըստ աշակերտների

ակտիվության և ինքնուրույնության կարելի է առանձնացնել տվյալ խաղի տարբեր տարատեսակներ.

- ✓ Նկարազարդական վերլուծություն՝ դրանում ներկայացված հերոսների դիմախաղի արտահայտչականության տեսանկյունից:
- ✓ Ստեղծագործության ընթերցում դերերով՝ նախապես բանավոր նկարագրելով հերոսների հագուստները, դիմախաղը, շարժուձևը և այլն:
- ✓ Որևէ ստեղծագործության *«կենդանի պատկերների»* ստեղծում: Առաջադրվում է առավելագույնս ճշգրիտ ներկայացնել հերոսների դիրքը և դիմախաղը: Ներկայացված պատկերների մեջ ընտրվում է ամենահաջողվածը:
- ✓ Ներկայացման սցենարի կազմում և դեկորացիաների, հագուստի բանավոր նկարագրում[1]:

Կարելի է կիրառել «Թատրոն-էքսպորտ» հնարը: Այս հնարի կիրառման ընթացքում երեխաներից չի պահանջվում հատուկ նախապատրաստում: Սովորաբար այս աշխատանքը կարելի է սկսել «Շաղգամը» հեքիաթի բեմականացումից, քանի որ այդտեղ հերոսները չեն խոսում: Երեխաներին բաժանվում են հեքիաթի հերոսների դիմակները (բաշխվում են դերերը): Կադրից դուրս ձայնով հնչում է հեքիաթը, իսկ «դերասանները» կատարում են այն, ինչն ազդարարվում է: Աշխատանքի այս ձևն օգնում է երեխաներին՝ վստահել իրենց ուժերին: Հեքիաթները բեմականացվում են նաև տիկնիկների միջոցով: Այս աշխատանքն առաջին դասարանցիներին օգնում է՝ հղկելու իրենց շարժումները և արտահայտիչ ներկայացնելու տիկնիկների վարքագիծը: Սա նաև միջոց է՝ հարստացնելու սեփական ներաշխարհը: Երեխան իր խաղով՝ որպես ստեղծագործող, կենդանացնում է տիկնիկին:

Ստեղծագործական դասերի ընթացքում երեխաներն ընտրում են հեքիաթը և դերային խաղով ներկայացնում մի դրվագ հեքիաթից:

- **Ստեղծագործության բեմականացում:** Ստեղծագործական բնույթիաշխատանքի այս տեսակը պետք է առանձնացնել որպես առավել կարևոր ցուցադրական միջոց. ընդ որում, այն կարելի է իրականացնել բոլոր դասարաններում: Թատերական ներկայացման շնորհիվ ստեղծագործության բոլոր կերպարները հանդես են գալիս համապատասխան գործողություններով: Բեմականացումը կարելի է անցկացնել.

1. Միայն բառերի միջոցով, այսինքն՝ դերերով ընթերցանության և բեմադրության ձևերով:

2. Միայն մնջախաղի միջոցով:
3. Բառերի և մնջախաղի զուգակցմամբ[1]:

Երեխաներին առաջարկվում է պատկերացնել հրաշալի հեքիաթային տեսարան, երևակայությամբ ցուցադրել հեքիաթի հերոսների գործողությունները, ներկայացնել նրանց բնավորությունը և տրամադրությունը՝ քայլվածքի, դիմախաղի ու ձայնի միջոցով: Դերային խաղերի ընթացքում պահանջվում է կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի ներաշխարհ: Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ: Այս աշխատանքի ընթացքում հնարավոր է դառնում յուրաքանչյուր աշակերտի հանձնարարել իր հոգուն և ուժերին հարազատ ստեղծագործական առաջադրանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները» խորագրով անցկացրած տեսական ուսումնասիրությունների, վերլուծության հիման վրա եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Երեխաները վաղ դպրոցական տարիքից պետք է ցուցաբերեն անկախություն, զարգացնեն մտածողությունը և ինքնաիրականացվեն: Ուսուցիչներն ու ծնողները պետք է ամեն կերպ խրախուսեն երեխայի նախաձեռնությունը, ինչպես նաև առաջնորդեն նրան ոչ թե հրամաններով, այլ ընկերական խորհուրդներով ՝ հիշելով, որ նրանք արդեն անվիճելի իշխանություն են այս տարիքի երեխաների համար: Ապագայում նման որակների զարգացումը մեծապես կօգնի սովորողի հետագա սոցիալականացմանը:
- Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ունի ուսումնադաստիարակչական նշանակություն: Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները զարգանում են այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանների հասնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, խելքը և երևակայությունը, հետևաբար երեխաների զգացմունքային ոլորտի զարգացումը, ինչպես նաև մտավոր կարողությունների զարգացումն ավելի արդյունավետ կատարում են խաղի մեջ:
- Խաղերը մեծ նշանակություն ունեն երեխայի բնավորության դաստիարակման գործում: Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է խաղ-բեմականացումը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում:
- Խաղ օգնությամբ երեխան ձեռք է բերում նոր որակներ, ինչպիսիք են շփվելու, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կոորդինացնելու ունակությունը, զգացմունքների արտահայտությունը: Լուծվում են մի շարք խնդիրներ՝

բացահայտել իրենց ներքին աշխարհը, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնել ինքնագնահատականը:

- Խաղի կիրառությունը զարգացնում է երեխաների միջև միջանձնային հարաբերություններ: Ակտիվորեն զարգանում է երեխայի ստեղծականությունը և երևակայությունը: Այն դաստիարակության և կրթության զարգացման միջոցն է, որը ձևավորում է երեխայի անհատականությունը:
- Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ մանկավարժները նպատակահարմար են համարում ստեղծագործական ունակությունների զարգացումը սկսել տարրական դասարաններից: Հարցված մանկավարժների մեծամասնությունը ծանոթ է կրտսեր դպրոցում ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական ուղղություններին, մանկավարժները աշակերտի ստեղծագործական ունակությունների զարգացման գործում առաջնային են համարում դասվարների և ծնողների դերակատարությունը: Մանկավարժների մեծամասնությունը համարում են, որ երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը արդյունավետ է խաղ-բեմականացումների միջոցով: Ստեղծագործական ունակությունները պետք է զարգացվեն՝ ապահովելով գործողությունների լիակատար ազատություն՝ առանց պնդելու դրանք դրսևորելու պարտավորությունը:
- Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացումը այս տարիքի երեխաների մանկավարժական գործունեության և դաստիարակության կարևոր կողմն է: Նրանք պետք է դառնան ակտիվ, անկախ, կարողանան որոշումներ կայացնել, ստեղծագործական լինեն խնդիրների լուծման հարցում, ինչը անհրաժեշտ է հասարակության հետագա հաջող սոցիալականացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախաշավիղ 3, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ Գիտամեթոդական հանդես, Երևան,2013, 66 էջ:
2. Նախաշավիղ 3, ՀՀ ԿԳՆ ԿԱԻ Գիտամեթոդական հանդես, Երևան,2010, 65 էջ:
3. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, «ՄԱՆՄԱՐ», Երևան, 2020, էջ 72:
4. Տաթև գիտակրթական համալիր, Մանկավարժական միտք 1-2, Զանգակ-97, Երևան, 2011:
5. Елагина В. С., Развитие творческих, способностей учащихся, (Челябинск)// CDCS.
6. Никишина В. В.. Инновационные педагогичекси техологии и организация учебно-воспитательного и методического процессов в школе:использование интерактивных форм и методов в процессе обучения учашихся и педагогов. 2-е изд., стереотип.-Волгоград: Учитель, 2008.-с.66.
7. Пономарев Я. А., К теории психологического механизма творчества. // Психология творчества. Общая, дифференциальная, прикладная, М., “Наука”, 1990, с. 13-37.
8. Пономарев Я. А., Фазы творческого процесса. //Исследование проблем психологии творчества, М., Наука, 1985, с. 5-26.
9. Рапацевич Е. С., Педагогика. Современная энциклопедия, Печатная книга, изд. Современная школа, 2010.
10. Шацкой В. Н., Эстетическое воспитание в начальной школе/Под ред. -М.,Академия пед, наук РСФСР, 1959.-с.188.
11. Юркевич В. С., Индивидуальный подход к воспитанию волевых привычек у школьников, М., 1977, 85 с.
12. Юркевич В. С., Одаренность: иллюзии и реалность, М., 1990, 155 с.
13. https://www.academia.edu/10182039/Խաղային_տեխնոլոգիաներ?email_work_card=title հասանելի է 21.07.2020թ.:
14. http://www.zangak.am/pdf/mank-mitq-2010-2011/1-2-2011/mm-1-2.pdf հասանելի է 20.10.2020թ.:
15. https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/haroyan-grigoryan.pdf հասանելի է 20.02.2021թ.: